ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2/3.3-24

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2024թ. հուլիսի 30-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելված N2-ի **3.3 կետով** նախատեսված **«Աջակցություն Հայաստանում իրականացվող միջոցառումների զբոսաշրջային բաղադրիչին»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Ա.Սողբաթյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության գլխավոր մասնագետի պաշտոնակատար
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Լ.Պետրոսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի օրակարգը.

- մրցույթի արդյունքների ամփոփում:

Լսեցին

Հանձնաժողովի քարտուղարը տեղեկացրեց, որ «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» 2024 թվականի ծրագրի շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

Նշվեց, որ

1. Armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի **3.3 կետով նախատեսված «Աջակցություն Հայաստանում իրականացվող միջոցառումների զբոսաշրջային բաղադրիչին»** միջոցառման իրականացման նպատակով մրցույթին ներկայացվել է 3 (երեք) հայտ՝

- «ԳՐԻԻՆ ՌՈՔ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի,
- «Արեգակ Արդար» ՍՊԸ-ի,
- «Ազնավուր» Հիմնադրամի կողմից:

2. Armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում Ծրագրի հավելված 2-ի **3.3 կետով նախատեսված «Աջակցություն Հայաստանում իրականացվող միջոցառումների զբոսաշրջային բաղադրիչին»** միջոցառման իրականացման նպատակով թվով 2 (երկու) կազմակերպության՝

- «Արեգակ Արդար» ՍՊԸ-ի,
- «Ազնավուր» Հիմնադրամի

կողմից ներկայացված հայտերը չեն համապատասխանում մրցույթի հրավերի պահանջներին:

Մասնավորապես.

- «Արեգակ Արդար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում մրցույթի հրավերի 2.4 և 2.4.1 կետերի պահանջներին՝ գնային առաջարկը (ֆինանսական նախահաշիվ) ներառում է աշխատավարձի փոխհատուցում, փորձի նկարագրությունը հավաստող փաստաթուղթը և ներգրավվող մասնագետների ինքնակենսագրականները ստորագրված և կնքված չեն, միաժամանակ ներկայացված ծրագրի բնույթը հստակ նկարագրված չէ:
- «Ազնավուր» Հիմնադրամի կողմից ներկայացված ծրագրի մանրամասն նկարագրությունը և գործողությունների ժամանակացույցը, ինչպես նաև ֆինանսական նախահաշիվը չեն ներառում մրցույթի հրավերի 2.4.1 կետով սահմանված պահանջները, ինչպես նաև փորձի նկարագրությունը չի արտացոլում հիմնադրամի առնվազն վերջին մեկ տարվա գործունեությունը:

Թվով 1 (մեկ) կազմակերպության՝

- «ԳՐԻԻՆ ՌՈՔ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բավարարում է մրցույթի հրավերով ներկայացված պահանջներին, սակայն ընկերությունը կարող է հաղթող ճանաչվել հրավերով պահանջվող 2.4 կետի 4-րդ ենթակետով սահմանված գործողությունների ժամանակացույցը խմբագրելու և միջոցառումը մինչև 2024 թվականի նոյեմբերի 1-ը նախատեսելու դեպքում:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Մերժել** Ծրագրի հավելված 2-ի **3.3 կետով նախատեսված «Աջակցություն Հայաստանում իրականացվող միջոցառումների զբոսաշրջային բաղադրիչին»** միջոցառման իրականացման նպատակով մրցույթի հրավերի պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 2 (երկու) կազմակերպության՝

- «Արեգակ Արդար» ՍՊԸ-ի,
- «Ազնավուր» Հիմնադրամի կողմից ներկայացված հայտերը:

2. Առաջարկել Ծրագրի հավելված 2-ի **3.3 կետով նախատեսված «Աջակցություն Հայաստանում իրականացվող միջոցառումների զբոսաշրջային բաղադրիչին»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող թվով 1 (մեկ) կազմակերպությանը՝ «ԳՐԻԻՆ ՌՈՔ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին, վերանայել իր կողմից ներկայացված ծրագրի իրականացվող գործողությունների ժամանակացույցը, համապատասխանեցնելով այն մրցույթի հրավերի պահանջներով նշված ժամկետին՝ մինչև 2024 թվականի նոյեմբերի 1-ը: Առաջարկվող փոփոխությունը կատարելու դեպքում կազմակերպության կողմից ներկայացված հայտը կհամարվի հաղթող:

3. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ա.Մկրտչյան -

Ս.Հովհաննիսյան -

Ա.Սողբաթյան -

Հ.Սահակյան -

Լ.Պետրոսյան -

Շ.Հովսեփյան -